



ԱԶԱՏ ԽՕՄՔ

ՀԱՄԱԹ 27 ՀՈԿՏ . 1906 . ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

ԴՊՐՈՅԸ ԲԱՅՈՒԱԾ

Ալեքսանդրիոյ Պօղոսեան վարժարանը քանի մը անգամ բացուիլ գոցուելէ ետքը, այս անգամ վերջնականապէս բացուեցաւ... մինչև ցնոր տընօրինութիւն:

Երէքշաբթի իրիկուն արժ. Առաջնորդ Հօր կողմէ պաշտօնական արձակ յայտարարութիւն մը (1), Ալեքսանդրիոյ հայ ծնողքներուն ուղղուած, «ուրախութեամբ» կը ծանուցանէր թէ՛ հոգաբարձութիւն մը կազմուած է վսեմ. Միքայէլ պէյ Բէիզեանի ատենապետութեամբ և անդամակցութեամբ Տ. Տ. Աղեքսանդր Փապուճեանի, Արամ պէյ Արշակեանի, Գէորգ ձիյէր-

(1) Արժ. Աղաւնունի վարդապետին Մուսան քիչ մը անհանգիստ ըլլալով կարելի չէ եղած այն պաշտօնագիրը ոտանաւոր խմբագրել:

Ծ. Խ.


ճեանի և Յակոբ Փափագեանի:

Բարեբախտաբար առաջնորդական այս յայտարարութիւնը կատակ մը չէր և կազմուած հոգաբարձութիւնն ալ իրական՝ և ոչ թէ մտացածին, ինչպէս այն հոգաբարձութիւնը զոր Լուսաբեշ կազմած էր իր էջերուն մէջ:

Նորահազմ հոգաբարձութիւնը պայման դրած էր որ Սմբատ Բիւրատ հեռացուի իր պաշտօնէն և այդ պայմանով ձեռնարկած է իր պաշտօնին: Իր առաջին գործը եղած է նոր սընորէն մը սահմանել վարժարանին և գոհութեամբ կը ծանուցանենք որ այս պաշտօնին կոչած է Տ. Յակոբ Աղասեր, որ ինչպէս յայտնի է քանի մը տարիներէ ի վեր Գերմանիոյ մէջ գիտութեան և մանկավարժութեան կը հետեւէր բարձրագոյն համալսարաններու մէջ և վերջերս դարձած էր Ալեքսանդրիա: Տ. Աղասեր իր զարգացումովը, գիտական պաշարովը, ուսուցչական փորձառութեամբը և պարկեշտութեամբը կատարելապէս տրժանի է իրեն յանձնուած պաշտօնին և կրնանք վստահ ըլլալ որ իր տեսութեան տակ Պօղոսեան վարժարանը պիտի կրնայ բարեկարգուիլ և յառաջգիմել և մուգնել տալ իր տխուր անցեալը:



ՍՐՃԱՐԱՆԻ ԹԻՓԵՐ



Մ Ի Ր Ի Ճ Ա Ն Ը

(Շար. 20րդ թիւէն)

Եւ ի՛նչ զհաճապատ անզգայութիւն մը, տանալութեան ի՛նչ բարի, արի կռնակ մը, ի՛նչ անկարեկիր կրողութիւն մը կրէական կռնակի...

Ի զուր աչքերդ կարելի եղածին չափ խորունկ կ'ընես ու հեռահայիաց, մտածութեան ու երազանքի տարտամութիւններով իզուր կը մըզչապատես զւնոնք... Երանաւէտ կամ երազաւէտ քունէ մը ընդոստ արթնցողի, իր երջանիկ նեղքնութեանէն բրտօրէն խլուողի շլմրած, շուարած, «չուսինէն ինկած» երեւոյթներով ի զուր երեսը կը նայի, ամէն մէկ խօսքին, կրկնել կուտաս ըսածը, անկէ հեռու բացակայ ըլլալդ յայտնելով այսպէս քաղաքաՎարօրէն...

Ի զուր հեազհեաէ անտարբերութեան ցուրտ գիմակը յանցունես երեսիդ, ծաղրին ժանիքները կը ցուցունես ու սուր սուլինները կ'արձակես, արհամարհանքին յօնքերը կը պոստես ու շըրթունքը կը կախնս, ձանձրոյթին մեծայօրանջ բերանը կը բանաս երեսն ի վեր, զինքը կլէշու չափ խօշոր ու կատաղի...

Անիկա չի վճատիր, ու կը խօսի, կը բարբառի, կը ճառէ, երեք բաներ որոնք մի և ան-

բաժանելի երրորդութիւն մը կը կազմեն պատկառելի՝ որսն առջև կը խոնարհիս դուն, անսահման գլխու... ցաւով մը:

Ի դուր խօսքերդ երթալով կը կարճեցնես տտախճանարար հատնող համբերութեանդ վրայ շափելով զանոնք. Ի դուր Քրազը սող կ'ընես, տողը՝ բառ, բառը միավանկ ու ձայնարկութիւն. աս ալ շատ գտնալով՝ լռութեան կ'ապաւինիս, լռութեան առածային պերճախօսութենէն վախնալով՝ մընջկատակի կը դիմես. գլխու, ուսի շարժումներով, դէմքի ծամածռութիւններով ա'լ կը սկսիս պատասխանել իր խօսքերուն. շատ անդամ յօնքի պոստում՝ մը կամ շրթունքի ծալք մը դնելով երկայն նախադասութեանց իբր վերջակէտ, իբր փակագիծ... Անօգուտ վաստակ. կը շարունակէ անիկա, կը շարունակէ Մաք Մահօնի(*) խափշիկին պէս, ալ աւելի սևերես Աղեքսանդրիոյ խնամակալութեան պէս, ազգային տեղական պայքարին պէս, հայ թերթատարափին, Ազատ Բեմ-Լուսարեր բանակուիին, ուսական տագնապին, քնատութեան անհասնում գիշերի մը, շարայալեալ ձախորդութեան մը պէս, վերջապէս բոլոր նեղացուցիչ ու չի լմնալիք բաներուն պէս...

Ասանկ զմայլելի մէկն է Միրիճանը. Բայց անիրաւ չըլլալու համար, պէտք է ըսեմ որ միմիայն նեղութիւն և տաղսուկ չէ որ կրած եմ

ու կը կրեմ իր երեսէն, կամ աւելի ճիշտ՝ իր բերնէն: Օ՛ չէ, մեծ զուարճութիւններ կը պարզեմ իրեն. բարի զուարթութեան անմահական ժամեր ոչոնց համար յաւէտ երախտապարտ եմ իրեն ի խորոյ իմ քրքջամու կոկորդին...

Ճշմարիտ կ'ըսեմ, եղած են օրեր ուր իր պէտքը զգացած եմ շատ զօրաւոր կերպով, այն տեսակ պահերու՝ ուր քովս շահեկան ոչ մէկը գտնուած է, ձեռքս ոչ մէկ գիրք կամ գրութիւն մտադրու, և որ աւելին է, դիտուս մէջ ոչ մէկ գաղափար սրուն հետ կարելի ըլլայ մտերմօրէն ժամանակ անցունել, - այլ երջանիկ, լուսաւոր պարագութիւն մը, անծայրածիր, անհարկոն, ալ միայն օդ՝ ազատութիւն, բաց՝ ուղեղիս մէջ, Ընդհանուր տրամադրութիւն մը զուարճանալու, նմաններուս նկատմամբ ճիծաղին աստուածաին ներողամտութեան վիճակը, հոմերական քահնապահութիւն փոթորիկին յառաջնութեան մտային հանդարտութեան վիճակ մը, կազմ ու պատրաստ, ոչ կ'սպասէ բարեպատեհ միջադէպի մը կամ հանգիստի մը ելեկարոսանքին. .

Եղած են օրեր ուր ես՝ կանչած եմ զինքը հեռուէն, ու երբ քովս եկած է, խանդավառ ընդունելութիւն մը ըրած եմ իրեն, ճիծաղներով ու բացագանչութիւններով ողջունած եմ անգին զաւեշտականութիւնն իր անձին:

Այն աստիճան որ խեղճը շուտօրոք մնացած

է չի գիտնարով ինչպէս հաշտեցնել այս խնդու-
մերես ընդունելութիւնը ուրիշ անգամներու ջըր-
տապէմ ընդունելութեան հետ: Այս տեսակ պա-
րագաներու մէջ, չեմ շատանար զինքը մտիկ
ընելով և իր ըսածներուն պատասխանելով, այլ
կը մղեմ, կը մշտեմ, կը հրեմ զինքը իր էութե-
ան զառիթափին վրայէն մինչև յետին փոսը...
Իր ծիծաղելութեան: Հարցումներ կ'ուղղեմ իրեն
չիլ ու նպատակայարմար, նախատեսուած կամ
անակնկալ զաւելտականութեամբ պատասխան-
ներ ստանալու համար իրմէն իր բոլոր կատա-
կերգական կարելիութիւններուն թռիչ կու-
տամ իմ ծիծաղներուս թափ ու թեւ տալու
համար... : Քաջութիւնը կուտամ իրեն՝ առանց
ո և է վերապահումի, ամբողջովին երևալու, ի
հանդէս գալու իր ճշմարտութեանն ու ինքնութե-
անը մէջ, զորս կը չափազանցէ ալ, կը կատա-
րելագործէ՝ ծիծաղկօտ հաւանութեանս ու մերթ
ալ գովեաններուս վարպետօրէն հրամցուած գի-
նիին ներգործութեամբը... :

Ան կ'արբշոյի, կը կ'արժնցէ ինքզինքը՝ այս-
ինքն ամբողջովին կը գտնայ ու ի տես կը գնէ, կը
հրճուի զիս ինդացուցած ըլլալու իր մեծագոր-
ծութեամբը, և ինքն ալ կը խնդայ ինձի հետ,
երջանի՛կ անգէտ արարածը որ է և պիտի մնայ
միշտ իր երանաւէտ տխմարութեան յաւիտենու-
թեանը մէջ...

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՔՐԱԿՈՐԾՈՒՄ

Ծնողքները՝ առհասարակ՝ դժգոհ են Պօղոսեան վարժարանի խնդրին այս ձև կարգադրումէն:

• Մենք միայն Սմբատ Բիւրատի հետոյցումը չէինք պահանջեր, այլ բոլոր միւս ասպէկար ու անկարող ուսուցիչներու հետացումը կը բռնէ:

Ծնողքները բացարձակապէս իրաւունք ունին: Ի սկզբան ժողովրդեան միաժ պայքարը ամբողջ ուսուցչական մարմնոյն դէմ էր և ո՛չ թէ միմիայն Սմբատ Բիւրատի, և ահա՛ մութին մէջ գործուած կարգ մը մեքենայութեանց շնորհիւ, այժմ Սմբատ Բիւրատը միայն հետացնելով կը կարծեն գահացում տալ Ծնողքներուն և բարկկարգել վարժարանը:

Ասիկա խաբեբայութիւն է, ասիկա ժողովրդի քթին խնդալ է:

Ի՞նչ էր ժողովրդին բողոքը դպրոցական խնդրին մէջ. թէ տղաքը բան մը չեն սորվիր, թէ վարժարանը, հակառակ եղած զոհողութիւններուն, հետզհետէ կը յետադիմէ, թէ դասատուները անկարող են իրենց պաշտօնը արժանաւորապէս վարելու, թէ դպրոցին վրայ կանոնաւոր հսկողութիւն մը չըլլալով, ամէն բան անկարգ ու խառնաշփոթ վիճակի մը մէջ կը գլուխուի:

Արդ, եթէ Սմբատ Բիւրատ իբրև անօրէն, այս ամէնուն մէջ պատասխանատուութեան մեծակակ բաժին մը ունի, ուրիշ ուսուցիչներ, առաւել կամ նուազ չափով, նմանապէս պատասխանատու են:

Իսկ եթէ Սմբատ Բիւրատ իբրև անկարող ուսուցիչ ճամբու գրուեցաւ, ճշմարտութեան սիրոյն համար պէտք է ըսել որ Պօղոսեան վարժարանի բոլոր ուսուցչական ժամանոյն մէջ միակ ուսուցիչն էր որ քիչ շատ կարողութիւն ունի իր պաշտօնը կատարելու:


Մենք Սմբատ Բիւրատը չենք պաշտպաներ, բայց իրաւունք ունինք ժողովրդին հետ պահանջելու որ Սմբատ Բիւրատէն առաջ, կամ դռնէ Սմբատ Բիւրատին հետ, դպրոցէն հեռացուին իրմէ շատ աւելի անկարող ուսուցիչները որոնք տարիներէ ի վեր բոյն դրած են այդ կրթական յարկին մէջ:

Նոր հոգաբարձութիւնը որ ամբողջովին կազմուած է կարող, բանիբուն և պարտաճանաչ անձերէ, պէտք է ջանայ անմիջապէս գօհացում տալ ամէն կողմէ յայտնուած պահանջքին այն է՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՔՐԱԴՈՐԾՈՒՄ:

Պէտք չէ որ ինք անգիտակցաբար կամ բարեմտօրէն գործակից ըլլայ մութին մէջ սարքուած մեքենայութեանց, շիլ համաձայնութիւններու, անձնական հաշիւներու:

Հոգաբարձութիւնը օգտակար գործ մը կարենալ անենելու համար պէտք ունի ժողովրդին բարոյական աջակցութեանը և այս աջակցութիւնը պիտի ունենայ երբ անոր արդար պահանջումները ամբողջովին կատարէ:

ԼՈՒՍԱՐԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԶՐՊԱՐՏԱԿԱՆ
ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ



Ասկէջ քանի մը շաբաթ առաջ Գահիրէ հըրատարակուող «Լուսաբեր» թերթը իր ներքին Լուսբերուն մէջ կը ծանուցանէր թէ Կրակ թերթի խմբագիր Բարսէղ Շահպաղ Մէնշիէի հրապարակը, Յոյներու հետ կռիւի բանուելով, անոնցմէ մէկուն գլուխը պատռած էր և թէ այդ առթիւ դատ բացուած էր իրեն դէմ:

Այդ լուրը բացարձակ սուտ մըն էր և միմիայն հնարուած՝ Բ. Շահպաղէն ստոր վրէժխնդրութիւն մը առնելու համար, որովհետև մեր բարեկամը Լուսաբերի մէկ ողորմելի խմբագիրը քննադատած էր, լոկ գրականապէս: Այսուհանդերձ այդ զրպարտական մատնութիւնը իր անմիջական արդիւնքն ունեցաւ, ի մեծ ուրախութիւն անշուշտ Լուսաբերեան խմբակին. Բ. Շահպաղի դէմ դատ բացուեցաւ և այս չորեքշաբթի օր, վկանները լուսելէ ետք այդ մատնութեան բացարձակ սուտ մը ըլլալը ապացուցուեցաւ և մեր համակ-

րելի բարեկամը անպարտ արձակուեցաւ, մինչ
Լուսաբերեանք անհամբեր կը սպասէին իր մէկ
քանի ամսուան բանտարկութեան:

Պէտք է գիտել տանք թէ բոլոր եգիպտա-
կան մամուլին մէջ, հայ թէ օտարազգի, Լուսա-
բեր միակ թերթը եղած էր այդ զրպարտութիւ-
նը հրատարակող:

Այս երկրորդ իրողութիւնը այնքա՛ն պեր-
ճախօս է որ մեր կողմէ ու է է մեկնութիւն ա-
ւելորդ կը համարինք: Միայն թէ՛ այս չէ՛ լրա-
գրութիւնը:

ԹԱՏՐՈՆ

Յառաջիկայ հինգ շաբթի իրիկուն, Ալհամպ-
րա թատրոնին մէջ շքեղ ներկայացում մը պիտի
տրուի ի նպաստ Վեսելյօ թատերախմբին տնօ-
րէն Ա. Պէլեանի, որուն ասկէ առաջ թէ հոս է
թէ Գահիրէ տուած ներկայացումները այնքա՛ն
փալլուն յաջողութիւններ ունեցան:

Սոյն արտասովոր ներկայացման համար յա-
տուկ կարգադիր Յանձնախումբ մը կազմուած է
Տ. Մ. Տիրանէ, Տ. Ճօն Փափազեանէ և Տ. Կ.
Պէլեանէ, որ ու է է ջանք չէ խնայած ներկայաց-
ման յաջողութեանը համար: Մանօթ դերասանա-
պետ Տ. Վ. Պապայեան ևս, որ վերջերս Պուլկա-

րիայէն եկած է, պիտի մասնակցի այս ներկայացումին:

Վաստանք որ Ալեքսանդրիոյ թատերասէշ հասարակութիւնը պիտի փութայ իր ներկայութեամբը քաջալերել համակրելի գերասանը որ այնքա՞ն անդամներ մեզ կրցած է քահրահածայն խնդացնել:

ԺԱՄԱՆՑ

- Բարեւ, ըսինք քէօթիւրճի Սարգիս պատուելին, երբ քայլամոր կ'ընթանար Ապու Տարտարի ափերով:

- Աստուծոյ բարին, պատասխանեց ուսուցչութեան ածան կարապետը, որ չ'ըրցաւ ձեռքերնիս թօթուել, Բեւերուն տակ զէզ մը դասագիրք և քսանէն աւելի լրագիր գանուելու համար:

- Ժողովուրդը ինչ կ'ըսէ կ'որ դպրոցին համար, հարցուցինք ժողովրդի ինքնակոչ ներկայացուցչին:

Պատուելին ահնոցը շիտկեց, սիկառէթ մը ուզեց և պատասխանեց հանդիսաւորապէս.

- Ժողովուրդը դժգոհ, պարոն, կացութիւնը ծանր է, զէպերը տարբեր կերպարանք պիտի ստանան, ժողովուրդը կը պահանջէ որ...

- Բնզ դպրոցի սնօրէն ընեն, ըսինք խօսքը կորելով:

- Կ'ազաչեմ անձի խնդիր չյարուցանենք, պատասխանեց, և կամ ուրիշը, այդ խնդիր չէ, թիզ դպրոցը ազնկ ըլլայ վնաս չունի թէ սնօրէն չըլլամ և պարզ ուսուցիչ մը ըլլամ ...

- Ո՞ր ճիւղերուն համար է ձեր մասնագիտութիւնը պատուելի:

- Ես ավէն ճիւղի վրայ երդող թռչուններէն եմ, ըսաւ պատուելին սրամտօրէն. տալիք դասս կարևորութիւն չունի, րուն խնդիրը մէթօսին վրայ... մէթօս ունիմ, եղբայր, խօսք չէ. հայերէն, ֆրանսերէն, անգլիերէն, թուրքերէն, յունարէն, հա՛, նայէ՛, կրնամ սորվեցնել... ևս չիտակը կ'ըսեմ, չգիտցածիս, չեմ գիտեր, զոր օրինակ աստեղագիտութիւն դաս չեմ կրնար տալ, բայց աշխարհագրութիւն, պատմութիւն իրագրութիւն, թուարմութիւն, կոծնագիտութիւն, տե՛ս ասոնք շատ լաւ դաս կուտամ, բայց ես ինքզինքս չեմ գովեր ուրիշներուն պէս... գիտցածիս գիտեմ կ'ըսեմ, չգիտցածիս՝ չեմ գիտեր... տե՛ս ազգար, հոլանտերէն չեմ գիտեր, բայց քրիստոնէական, ազգային պատմութիւն, բարոյագիտութիւն, քաղաքական սոցիալութիւն, արտասանութիւն...

- Տեսուինք, պատուելի, նորէն տեսնուինք. մնաք բարով, կը տեսնուինք, երթաս բարով, ըսինք ուստինք քալեցինք որովհետեւ «Ազատ խօսք»ին մէջ ա՛լ տեղ չէր մնացած:

ԵՒ ՄՆԱՅՈՒՆՔ ԵՂԻՑԻՆ ԱՅՑԵԼՈՒ

Կը լսենք թէ պօղոսեան վարժարանի նոր վարժարանի նոր հոգաբարձութիւնը որոշած է լոկ իբրև այցելու ուսուցիչ պաշտօ՛ւ տալ Տ. Երուանդ Սըրմաքէչխանլեանի և Տ. Մեսրոպ Նորատունկեանի, որոնք մինչև հիմակ մնայուն ուսուցիչներ էին՝ նմանապէս այդ երկու ուսուցիչներէն կարևոր դասախօսութիւնները պիտի առնուին և պիտի յանձնուին նորընտիր տնօրէնին և Գահիրէէն բերուած կարող ուսուցչի մը:

ՍԵՐ ՎԻՊՍԿԸ

Ինքներու առատութեան պատճառաւ ստիպուեցանք յաջորդ թիւին ձգել «Միքէի Սիրարկած»-ին շարունակութիւնը:

ԱՌԱՋՆՈՐԴԸ ԿԸ ԳՈՐԾԷՆ ԵՂԵՐ

Գահիրէի «Լուսաբեր»ը որ ժամանակէ մը ի վեր սկսած է Ալեքսանդրիայէն խենթութեան տեղեկութիւններ հրատարակել, իր վերջին թիւին մէջ կը ծանուցանէր Արժ. Առաջնորդ հայրը Ալեքսանդրիա հասածին պէս գոհացուցիչ կերպով կարգադրեր է պօղոսեան վարժարանի խնդիրը:

Մեր դիտցածին համեմատ նորին Արժանապատուութիւնը Ալեքսանդրիա հասածին պէս մաքրողական մը առած և անկողին մտած է: Հասնելուն հետեւեալ առտուն մաքրողականը ներդրած չլլալով երկրորդ մաքրողական մըն ալ առած է, որ մասամբ ներգործած է, որով հետեւեալ օրը արժ. Աղաւնունի վարժապետ երրորդ մաքրողական մըն ալ աննկու ստիպուած է:

Ահ'ա էր բոլոր գործունէութիւնը և իր ունեցած դերը պօղոսեան վարժարանի ինդրին կարգադրման մէջ. ասոր կրնան վկայել Հունեստի և Վիշիի ոյն պարսպ շիշերը որոնք Առաջնորդարանի սրճանոցը ի ցոյց դրուած են:

Եթէ զպրոցական կամ սեղային խնդիրները Յունեստիի պէս լուծողականներով կը լուծուին, և գոհացուցիչ կերպով, այն ատեն մեր պայքարները շատ կը դիւրանան և փոխանակ ամիսներով այս կամ այն անձ-

Նաւորութեան գալուն սպասելու, կրնանք ամէն ինչ
գոհացուցիչ կերպով կարգադրել Մ. Աճէմեանի Ափ-
րիկեան զեղարանը գիմելով:

Մաքրողական մըն ալ դուք չէ՞ք ատներ Լուսաբեր
սուտու:

Գլտի՞ք ի՞նչ անուն սխաժ են տալ շնորհալի
Մկրտիչ վրդ. Աղաւնուռնիի.

- Արժ. Բուրսօնեաք հայր սուրբ:

Ո՛վ մաքրողական, ի՞նչ ոճիրներ կը գործուին
քու անունովդ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ



Առ Տ. Յ. Յ. Ի. Ֆէկալլա (Գահիրէ).- Ստացանք
ձեր նամակը. դիտողութիւննիդ ճիշտ է. ներողութիւն
սխալմունք եղած է: Մնացեալը բոսթային յանձնեցէք:

Առ. տօբթ. Ֆ. Յ. Մ. (Գահիրէ).- Ասկէ ետքը այդ
հասցէին կը շրկենք:

ՎԻՃԱԿ ԱՆՈՒԹԻՒՆ

Շէրիֆ փաշա փողոցը, Տ. Թարթըճեանի խանու-
թը, ի ցոյց գրուած է գեղեցիկ ձեռագործ նկար մը.
Կեղարուեստական նրբակերտ գործ մը զոր պատրաս-
տած է Օր. Մարի Աճէմեան: Սոյն ձեռագործը վիճա-
կահանութեան գրուած է. տոմսերուն թիւն է 200
հատ, իսկ ամէն մէկ հատը 5 շրուշ ողջ: Անոնք որ
սոյն արժէքաւոր ձեռագործին վիճակահանութեան թի-
ւերէն կ'ուզեն ունենալ, կրնան գիմել թէ Տ. Թարթը-
ճեանի խանութը և թէ Տ. Յ. Ղազիկեանի:

Այս առթիւ կը ծանուցանենք թէ Օր. Մարի Ա-
ճէմեան պատրաստ է ամէն տեսակ ձեռագործի մաս-
նաւոր դասեր տալ գոհացուրիչ պայմաններով:



“ԱՋՍ ԽՕՄ”-ի Պարանները

ԱՋՍ ԽՕՄ - ԿԵ ՇՐՏԱՐԱԿՈՒՄ ԵՄԲՍ ՕՐԵՐԸ
Նպիպոսի համար բանկային է.

40 ՔԻԷ 40 Դ.Ը ՈՂՁ
20 „ 20 „ „

ԱՐՏԱՍԱՀԱՆ

ԵՐՈՊԱ 40 ՔԻ 10 ՏՈՒՐ
ՌՈՒՍ 20 „ 4 ՌՈՒՄԼԻ
ԱՄԵՐԻԿԱ „ „ 2 ՏՈՒՐ

Բանձնարկարույթներ կանխիկ

ՀԱՏԸ 1 Դ.Ը 119,2

“ԱՋՍ ԽՕՄ”-ի համար բանկային կամ
որ և է դրույթներ պետք է ուղղել հե-
տևեալ հասցեին՝

Կ. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE (EGYPTE)

Մանկություններ կրեդյուսույթի մասնաճյուղ
պայլաններով:

Պատասխանատու խորհրդի Ե. ՍՏԵՎԱՆ

Տպր. Փուրք Գ. ՆԱԶԱՐԵԹԻԱՆ Ալեկսանդրիա